№ 175 Հոկտեմբերի 3 (15) 1880 Հոկտեմբերի 3 (15) № 175

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
*Тифлисъ. Редакція „Мшакъ“.*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Հարկաւոր կը լինէր:— Ներքին տեսութիւն: Նամակ Լէքսանդրապօլից: Նամակ Դիլիջանից: Նամակ Կէրչից: Նամակ Խմբագրին: Նամակ Խմբագրին:— Արտաքին տեսութիւն: «Голосъ» լրագրի թղթակցութիւնը: Ֆրանսիա: Զէրտօգորիա: «Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:*

## ՀԱՐԿԱՒՈՐ ԿԸ ԼԻՆԷՐ

—

*Թէ Ռուսաստանի այլ և այլ հայաբնակ քաղաքներից և թէ Կ. Պոլսից համակրական նամակներ ենք ստանում այն մեր առաջարկութեան առիթով, որ մենք մի քանի ժամանակ սրանից առաջ արեցինք, ասելով որ անհրաժեշտ կը լինէր հրատարակել այժմ ֆրանսերէն լեզուով մի թերթ, որի նպատակը լինէր ծանօթացնել Եւրոպային հայոց ազգի դրութեան, նրա թէ յատկութիւնների, թէ ժամանակակից պահանջների հետ, նրա ազգային կեանքի հետ:*

*Մի քանի տեղերից մեզ առաջարկում են բաւական նշանաւոր գումարներ, որպէս զի մենք ինքներս յանձն առնէինք հրատարակել Թիֆլիսում մի այդ տեսակ ֆրանսերէն թերթ: Մեր ծանօթներից մինը գրում է մեզ մի մեծ քաղաքից, որ այնտեղ մի հարուստ պարոն կայ, որ վաղուց է արդէն դիտաւորութիւն ունէր նուիրել մի խոշոր գումար այդ տեսակ լրագիր հիմնելու համար, բայց որովհետև մինչև այժմ ոչ մի տեղ չէ աջողվել հիմնել ֆրանսերէն լեզուով հայոց օրգան, փողը դեռևս անգործադրելի է մնացել պարոնի ձեռքում:*

*Կ. Պոլսի մեր բարեկամները դրդում են մեզ ձեռնամուխ լինել այդ տեսակ հրատարակութեան, աչքի առջև ունենալով, մանաւանդ, այն հանգամանքը, որ Կ. Պոլսում հայոց օրգան չէ կարող աջողվել և տեւողութիւն ունենալ: Բացի սորանից Թիւրքիայի մայրաքաղաքում հիմնվել է այժմ մի Թիւրքաց պաշտօնական լրագիր ֆրանսերէն լեզուով «Օսմանլի» վերնագրով, որի նպատակն է ամեն միջոցներով հայոց ազգի անունը կոտրել Եւրոպայի աչքում:*

*Այժմ, մանաւանդ, երբ Թիւրքաց կառավարութիւնը արգելել է Հայաստան բառը արտասանել, երբ «Օսմանլի» պաշտօնական թերթը հերքում է, որ լինէր Թիւրքիայում մի երկիր, որ Երմենիա անուանվէր, հերքում է որ աշխարհիս երեսին հայեր անունով մի ազգ լինէր, —այժմ, ասում ենք, անհրաժեշտ կը լինէր հասկացնել Եւրոպային թէ ո՛վքեր են հայերը, ինչ առանձնայատկութիւններ ունի այդ ազգը, ինչ է այդ ազգութեան բնաւորութիւնը, ինչ են նրա ձգտումները:*

*Հայերի վրա խօսելով Թիւրքֆրանսիական թերթը հայերին ազգութիւն չէ անուանում, այլ կոչում է նրանց հայոց համայնք....*

*Եւ ճշմարիտ, Թիֆլիսը այժմ ամենայարմարաւոր տեղը կը լինէր ֆրանսերէն լեզուով մի հայոց օրգան հրատարակելու:*

*Բաւական կը լինէր այդ տեսակ թերթ շաբաթը մի անգամ, կամ մինչև իսկ ամիսը երկու անգամ հրատարակելու:*

*Մենք կրկնում ենք, որ մենք պատրաստ կը լինէինք յանձն առնել այդ տեսակ լրագրի հրատարակութիւնը, եթէ հայ հասարակութեան կողմից նիւթական քիչ թէ շատ օգնութիւն յուսալ կարողանայինք:*

*Էնց որ կը նկատենք գործի ընթացքից, որ հրատարակութիւնը կարող է աջողվել, մենք իսկոյն խնդիրքով կը դիմենք տեղական կառավարութեանը, որպէս զի մեզ թոյլ տրվի յիշեալ ֆրանսերէն թերթը Թիֆլիսում հիմնելու և մեր խմբագրութեամբ հրատարակելու:*

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

24 սեպտեմբերի

Եթէ մի ակնարկ ձգենք Ալէքսանդրապօլի վաճառականների վրա, և համեմատենք նրանց այս տարվայ դրութիւնը անցեալ տարվայ դրութեան հետ, կարող ենք դրականապէս ասել, որ նրանք այս տարի աւելի վատ դրութեան մէջ են գտնվում քան թէ անցեալ տարի:—Որովհետև անցեալ ձմեռվայ հրէշաւոր թանգութիւնը, սպառելով մեր գիւղացիների նիւթական միջոցը, նրանց այնպիսի դրութեան մէջ ձգեց, որ նրանցից մեծ մասը չունենալով միջոցներ իրանց համար ցանք անելու հարկադրվեցան կիսովի ցանք անել: Մեր դաշտում գտնվեցան ամբողջ գիւղեր, որոնք սերմնացու հացահատիկներ չունենալով և չը կարողանալով էլ ուրիշից ձեռք բերել, համարեա թէ մնացին առանց վար ու ցանքի:

Իսկ կիսովի ցանք անող գիւղացին էլ իր արտերը հնձելուց, կալելուց յետոյ և ստացած արդիւնքը բաժանելուց յետոյ, այլ և իր արած պարտքերը վճարելուց յետոյ, մնացածը նրա ձմրան պաշարի համար շատ սակաւ է, և գարնան էլ սերմնացու չէ մնում: Այժմ երևակայեցէք, եթէ այսպէս է փոքր ի շատ ցանք ունեցողի դրութիւնը, ապա ինչ կը լինի բոլորովին ցանք չունեցողինը....

Իսկ մեր վաճառականների գործը ու առևտուրը, իմ խօսքը գլխաւորապէս մանուֆակտուրայի ապրանքով պարապողների վրա է, ըստ մեծի մասին այս դրութեան մէջ գտնվող գիւղացիների հետ է, որոնք մի կողմ թողնելով իրանց հացուսոը և մերկութիւնը, սկսում են հաց ձեռք բերելու միջոցների վրա մտածել....

Որովհետև մեր խօսքը եղաւ վաճառականների վրա, աւելորդ չեմ համարում ընթերցողին ծանօթացնել նրանց մի քանի յատկանիշների հետ:

Այստեղի վաճառականները առհասարակ, շատ ժիր, գործունեայ, խորամանկ և ճարպիկ մարդիկ են Առաւօտեան լոյսը չը ծագած, նրանք վեր են կենում, վազում են կրպակները, բաց են անում, և այնտեղ թողնելով իրանց որդիներին կամ գործակատարներին, իրանք սկսում են այս և այն կողմը ընկնել, գնողներ որոնել, հարցնել անցորդ գիւղացուն, թէ նրան «ճոթու կտոր» հարկաւոր է. և եթէ գիւղացին յայտնեց, թէ այո, պէտք է «ճոթու կտոր» առնի, մեր վաճառականը բռնում է նրա օձիքից, և կամ կախ ընկելով թևից, այդպէս քարշ տալով բերում է նրան իր կրպակը, աշխատելով, որ իր ձեռք գցած որսը ուրիշները չը յափշտակեն... Այստեղ միմեանց ձեռքից գնորդ խլելու պատճառով շատ անգամ սկանդալներ են լինում.... Դարսում է գիւղացու առաջ նրա ուզած այս ու այն կտորը, և բաւական չարչարվելուց յետոյ, հազիւ կարողանում է հաւանեցնել գիւղացուն: Յետոյ նրանք սկսում են սակարկել: Մեր գիւղացիները լաւ գիտենալով այստեղի վաճառականների իրարու մէջ ունեցած ատելութիւնը և նախանձը, որքան կարող են ապրանքը պակաս են գնահատում, վստահ լինելով, որ եթէ նա դուրս գայ այդ կրպակից և գնայ միւս վաճառականի մօտ, անշուշտ կարող է իր ուզած գնով ապրանք գնել:

Այս տիսուր իրողութիւնը աչքի առջև ունենալով, մեր վաճառականը արշինին մի, կամ քառորդ կոպէկ աշխատանքով և գուցէ շատ անգամ էլ վնասով վաճառում է իր ապրանքը:

Իսկ երբ նրանք գործ չեն ունենում, նստում են իրանց կրպակի մօտ, բամբասում են սրան և նրան, երբեմն էլ ընկնում են խոր մտածութեան և մինչև անգամ հալիւցինացիայի մէջ: Այո, նրանք երբեմն երևակայում են այն բախտաւոր ժամանակները, երբ որ գնում էին Թաւրիզ կամ Թիֆլիս, բերում էին ապրանք, և օգտվելով գիւղացու միամտութիւնից, իրանց բերած ապրանքը վաճառում էին նրանց վրա, և մէկին-մէկ փող էին աշխատում:

Մեր վաճառականուհիները փոխանակ իրանց տնտեսական գործերով զբաղվելու, փոխանակ իրանց աղջիկներին և տղաներին կրթելու, աշխատում են այնպէս անել, որ իրանց վրա շատ շատ խօսեն քաղաքի մէջ: Իսկ այդ նպատակին հասնելու համար, հարկաւոր է միշտ բարձր շրջանների մէջ ընկնել, հետևել նորաձևութեան, տարին մի քանի անգամ հրաւէր սարքել, և վերջապէս այնպէս շքեղ ապրել, որ ուրիշները միայն իրանցով հետաքրքրվեն:

Մեր վաճառականուհիները շատ և շատ շռայլ են. նրանց շռայլութիւնների մասին մի փոքրիկ գաղափար տալու համար, աւելորդ չեմ համարում նրանց հրաւէրներից մէկը նկարագրել:

Հրաւիրվում են 40—50 կանայք, սկսվում է կերուխումը, առաջ են գալիս 9—10 տեսակ թանգագին շաքարլամաներ, 6—7 տեսակ ընտիր քաղցրաւենիք, 4—5 տեսակ նոր և թարմ մրգեր, այսպէս ամեն բան իր կարգին: Հրաւիրուածները բացի իրանց կերած խմածից, տուն գնալու ժամանակը, ամեն մէկը պէտք է իր հետ տանի մօտաւորապէս երկու ֆունտ շաքարլամա.... Եթէ մի այսպիսի հրաւէրքը մանրամասնաբար հաշուելու լինես 200—300 ռուբլի նստում է մեր վաճառականի վրա:

Մինչդեռ նա բարեգործական նպատակի համար միայն մի քանի կոպէկ զոհելով բաւականանում է: Այդպիսի հրաւէրքներում մասնակցողներ լինում են վաճառականների կանայքը միայն, որոնց մէջ առաջին տեղը բռնում են վարժուհիները, որոնք իրանց ճառերով ուսումնարանների դաշտից քարոզում են հասարակութեանը հեռու մնալ շռայլութիւններից, մաքուր, բայց հասարակ կերպով հագնվել, ուշադրութիւն դարձնել որդւոց դաստիարակութեան վրա, և այլն:

Պատահում է հրաւէրքի մէջ մի որ և է բարեգործական նպատակով ստորագրութեան թերթ են բացանում և առաջարկում են հրաւիրուածներին ստորագրվել: Ստորագրվողների մէջ լինում են տիկիններ, որոնք մի քանի կոպէկ նուիրելով, իրանց քթերի տակ մրթմրթում են ասելով. «Այս ինչ է, մեզ բերել են պատելու, թէ պլոկելու....» Այո, նրանք այդպիսի դէպքերում մրթմրթում են, իսկ երբ որ բանը հասնի մարդ զարմացնելուն, նրանք չեն խնայում մէկ ռուբլու տեղ, տասը ծախսել.... Հրաւիրված կանայքը տուն դառնալով պատմում են իրանց մարդկանցը իրանց տեսածը, դեռ մի բան էլ աւելացնում են իրանց ամուսիններին ասելով. «մենք ումից պակաս ենք, եկող շաբաթ պէտք է այնպիսի հրաւէրք սարքենք, որ բոլորին զարմացնենք:» Այսպէս մէկը միւսից օրինակ առնելով, աշխատում են շռայլութեամբ իրար գերազանցել:

Եթէ այսպէս շարունակվի, մի, երկու տարի չանցած Ալէքսանդրապօլի վաճառականներից շատերը բոլորովին կը մնանկանան....

Գ. Բաղրամեանց

### ՆԱՄԱԿ ԴԻԼԻՋԱՆԻՑ

—

Սեպտեմբերի 21-ին

Դիլիջանի հայոց հասարակութիւնը հաւաքեց յոգուտ Հայաստանի սովատանջների 53 ռուբլ, որ ահա նուիրատուների ցուցակի հետ միասին ուղարկում եմ ձեզ, խնդրելով բարեհաճէք ստորագրողաց անունները տպել ձեր պատուական լրագրում 'ի մխիթարութիւն, իսկ փողը հասցնել ուր հարկն է:

Ա. Դ. Ռ. 3 ռ., Արշակ Սիմէօնեանց 2 ռ., Աթաբէգ Մէլիք-Էթեանց 1 ռ., Խաչատուր Մատինեանց 1 ռ., Իվան Մարտիրոսեանց 1 ռ., Ստեփան Գալուստեանց 1 ռ., Մկրտիչ Դաւթեանց 1 ռ., Վարդեվան Աբոյեանց 1 ռ., Մկրտիչ Տէր-Աբ-

բաշավեանց 1 ր., Սերգէյ Տէր-Պողոսեանց 1 ր., Աղէքսանդր Մէլիքեանց 1 ր., Թորոս Գրիգորեանց 1 ր., Александръ Тригуновъ 1 р., Աբրահամ Ամիրջանով 1 ր., Ղազար Մայիլեանց 1 ր., Յակոբ Յարութիւնեանց 1 ր., Մարտիրոս Աբոյեանց 1 ր., Տէր-Եսայի ք. Եսայեանց 1 ր., Բաղրատ Զալալեանց 1 ր., Ստեփան Աբաղեանց 1 ր., Մկրտիչ Նալբանդեանց 1 ր., Բէգլար Մարտիրոսեանց 1 ր., Ալաւերդի Դաւթեանց 1 ր., Աղէքսանդր Արսէնեանց 1 ր., Պետրոս Գրիգորեանց 1 ր., Աղէքսանդր Նալբանեանց 1 ր., Պ. Քօչարեանց 1 ր., Ղ. Մ. Ց. 50 կ., Ղարախանեանց 50 կ., Մկրտիչ Յարութիւնեանց 50 կ., Գէորգ Տէր-Գէորգեանց 55 կ., Աղէքսան Հայրապետեանց 50 կ., Աչաչերդի Ղարախանեանց 60 կ., Վարթեվան Բաղալեանց 50., Մարտիրոս Յարութիւնեանց 50 կ., Բակոփ Մամիկոնեանց 50 կ., Գէորգի Ավուշտրեանց 50 կ., Александръ Залдастановъ 50 к., Եղօր Զաքարեանց 50 կ., Михаилъ Арзаневъ 50 к., Ներսէս Աղաւելեանց 50 կ., Յովհաննէս Մխիթարեանց 50 կ., Սաքի Դաւթեանց 50 կ., Սահակ Տէր-Մարքարեանց 60 կ., Գէորգ Տէր-Գէորգեանց 50 կ., Սիսակ Բլբիւլեանց 50 կ., Սատուր Սիմոնով 45 կ., փաշա Աբդուլ Ֆաթ-օղլի 50 կ., Յովհաննէս Վարդանեանց 40 կ., Սարգիս Սարգսեանց 40 կ., Աւետիս Մատինեանց 40 կ., Յովհաննէս Սարգիսեանց 40 կ., Բէհբութ Յակոբեանց 40 կ., Սիմէոն Տէր Մէլիքսէթեկեանց 40 կ., Սեղբէյ Գապանց 40 կ., Հայրապետ Տէր-Յարութիւնեանց 40 կ., Վարդան Ղումաշեանց 40 կ., Սընրանդաֆիլ և Թոդոր 30 կ., Շահնազար Խանզատեանց 30 կ., Մահմատ Հաջի Ալի-օղլի 30 կ., Яковъ Петровъ 20 к., Գրիգոր Խաչատուրեանց 20 կ., Կարապետ Յարութիւնեանց 20 կ., Ատամ Հաջի Բունեաթով 20 կ., Թոմաս 20 կ., Խակ. Գալանիկոլայով 20 կ., Մուխայելով 20 կ., Ց. Արզումանեանց 20 կ., Սողոմոն Բէկնազարեանց 20 կ., Մամատ Բաղր 20 կ., Ստեփան վաճառական Բաղալեանց 20 կ., Գէորգ Ղուկասեանց 10 կ., Խ. Օսէփեանց 0 կ., Հաշիմ Կաֆար-օղլի 10 կ., Ս. Սկովբեանց 15 կ., Նահապետ 15 կ., Յով. Խաչատուրեանց 10 կ., Արթին Մոսէսեանց 15 կ., Ց. Ա. Անտոնեանց 10 կ., Մարտիրոս Դաղեանց 1 ր. 30 կ., Յակովբ Ռոստոմեանց 1 ր., Պ. Յարութիւն Աղաջանեանց 3 ր.: Փոստայի ծախսը հանած զուտ գումար մնում է ընդամենը 53 ր:

Արշակ Սիմէոնեանց

---

## ՆԱՄԱԿ ԿԷՐՉԻՑ

Սեպտեմբերի 16-ին

Կէրչի մէջ հաւաքեցինք յօգուտ Հայաստանի սովեալների 204 ռուբլի: Նուիրատուները սրանք են: Յովակիմ Տէօլլէթեան 5 ր., Կարապետ Լուսիկեան 15 ր., Սեդրակ Լուսիկեան 5 ր., Պետրոս Կիրեղեան 5 ր., Սարքիս Բաշանեան 1 ր., Ներսէս Մեղրիկեան 5 ր., Պողոս Մեղրիկեան 2 ր. 50 կ., Գէորգ Խազարեան 3 ր., Եղիա Յովակիմեան 5 ր., Ցամբարձում Յարութիւնեան 5 ր., Աւետիս Տէր Պողոսեան կաթոլիկ 3 ր., Աւետիս Ուզլեան 2 ր., Յարութիւն Քիշիշեան 1 ր., Յուսէփ Թորալեան 5 ր., Յարութիւն Թորալեան 5 ր., Սարքիս Կիրեղեան 5 ր., Աբրահամ Ճաֆերեան 10 ր., Յովսէփ Զօրունեան 5 ր., Հաճի Գէորգ Մարքարեան 1 ր., Եղիա Գալստեան 62 կ., Սարքիս Կարապետեան 5 ր., Մելքոն Քուրթեան 3 ր., Յարութիւն Ճուվելիքեան 2 ր., Իսպիրլի Ալի ուստա 2 ր., Օվհաննէս Խաղարեան 5 ր., Մելքոն Ասլանեան 5 ր., Օվհաննես Վարդէվանեան 5 ր., Օվհաննէս Քայրիմանեան 2 ր., Յակոբ Բէհանեան 2 ր., Տրդատ Քապասաքալեան 5 ր., Միսակ Թորալեան 1 ր., Մկրտիչ Մարտիրոսեան կաթոլիկ 3 ր., Մինաս Շահմելիքեան 3 ր., Ստեփան Արզումանեան 2 ր., Եսրիկայ Զէյիլ օղլի յոն 2 ր., Յուսէփ Մաչքալեան 1 ր., Գրիգոր Իսպերեան 1 ր., Աւետիս Մալխասեան 1 ր., Յակոբ Քիւրտեան 5 ր., Յովակիմ Վարդանեան 2 ր., Եսայի Մինասեան 1 ր., Աւետիս Զօպանեան 1 ր., Յարութիւն Փափազեան 3 ր., Վարաք Խարիպեան 1 ր., Մելքոն Փափազեան 2 ր., Յովսէփ Խարիպեան 1 ր., Յովհաննէս Խարիպեան 1 ր., Սիրաս Պէքզէմիրեան 1 ր., Հարիկ 1 ր., Խաչիկ Յարպէքեան 1 ր., Յակոբ Խոյումեան 1 ր., Գրիգոր Աստուածատուրեան 1 ր., Յարութիւն Ներսէսեան 50 կ., Խաչիկ Մալխասեան 1 ր., Սարքիս Զաքարեան 2 ր., Եսրան յոն 1 ր., Ղազար յոն 1 ր., Անաստաս յոն 1 ր., Գիմիկայ յոն 70 կ., Պանիկայ յոն 1 ր., Նիկոլայ յոն 40 կ., Եսրիկայ յոն 1 ր., Միքրոյ յոն 50 կ., Զօլայ յոն 50 կ., Կրիկորի յոն 40 կ., Քոստի յոն 15 կ., Պանիկայ յոն 40 կ., Արիստակէս Աւետիսեան 50 կ., Յարութիւն Յակոբեան 1 ր., Յովհաննէս Ալաճեանց 1 ր., Պետրոս Ճաֆերեան 2 ր., Յարութիւն Էմէքսուչեան 2 ր., Գրիգոր Աբրահամեան 5 ր., Օհաննէս Կոճիկեան 5 ր., Սայի Տէր Կարապետեան 1 ր., Յարութիւն Քաշերեան 1 ր., Կարապետ Քիւահեան 3 ր., Յակոբ Մերուենեան 1 ր., Կարապետ Տէր Կարապետեան 5 ր., Անյայտումն 2 ր. 2 կ.: Պողոս Քիւրդեանց 3 ր., Գումարն է 205 ր. 40 կ., որից 1 ր. 40 կ. փոստի ծախսը հանած, մնում է ընդամենը 204 ռուբլի:

Յովակիմ Տէօլլէթեան

---

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 30 սեպտեմբերի

«Մշակի» № 167 ներքին լուրերի մէջ տպած էր, որ պ. Խուրովը իր խորթ որդւոյ՝ Բաբանասեանի հետ ներկայացել է ձեզ և գանգատվել է Ներսիսեան դպրոցի վրայ՝ յայտնելով թէ վերոյշեալ Բաբանասեանցը թոշակաւոր որդեգիր է եղել Ներսիսեան դպրոցում և փոխանակ մաքուր և նոր սպիտակեղէն ունենալու՝ ցնցոտի և երեք ամիս չը լուացած շապկով է դուրս եկել դպրանոցից: Այս տեղեկութիւնը հաստատելու համար պ. Խուրովը ցոյց է տուել ձեզ մի զզուելի ցնցոտի փոխանակ մի շապկի:

Ես՝ որպէս տեսչ Ներսիսեան դպրոցի և անդամ հոգաբարձութեան պաշտօնապէս յայտնում եմ, որ պ. Խուրովի հաղորդած տեղեկութիւնը միանգամայն սուտ է և զրպարտութիւն:

Ահա իրողութիւնը. Ներսիսեան դպրոցում ամէն մի որդեգիր ունի չորս ձեռք սպիտակեղէն և միշտ շաբաթը երկու անգամ բոլորքեան սպիտակեղէն են փոխում. ուրեմն միանգամայն անհնարին է, որ նոցանից մինը՝ Բաբանասեանը երեք ամիս շարունակ սպիտակեղէն փոխած չը լինի: Ամարանոցից որդեգիրները վերադարձել են սեպտեմբերի 3-ին: Վերջին անգամ Բաբանասեանը սպիտակեղէն է փոխել, ինչպէս երևում է և ցուցակներից, սեպտեմբերի 4-ին և նոյն օրը առաւօտեան՝ որդեգրաց հետ գնացել է բաղանիք. իսկ սեպտեմբերի 6-ին նա տուն է գնացել. ուրեմն նրա շապիկը երեք օրվայ փոխած է եղել և ոչ երեք ամսվայ: Պէտք է աւելացնել և այն, որ ամարանոցում 2½ ամիս շարունակ ես ինքս մի և նոյն սենեակում բնակվել եմ որդեգրաց հետ և այնտեղ ևս միշտ շաբաթը երկու անգամ սպիտակեղէն են փոխել որդեգիրները և լուացքը ամէն շաբաթ ուղարկվել է քաղաք դպրանոցի լուացարարին և միշտ իր ժամանակին յետ է ստացվել:

Վերաբերութեամբ Բաբանասեանի շապկի ցնցոտի լինելուն, պարտ եմ համարում յայտնել, որ նրա չորս շապիկներից երեքը կարված են 1879-ի յունվարին և մինը 1879-ի սեպտեմբերին: Կարող էր արդեօք այդ ժամանակվայ ընթացքում քարքարվել շապիկը, քանի որ ամէն լուացքին պատռվածները միշտ կարկատվել են: Եթէ նրա շապիկը անպէտք լինէր, մայիսին նրա համար նորը կարել կը տային, ինչպէս մի քանիների համար արին: Եւ առհասարակ տարին երեք անգամ՝ յունվարին, մայիսին և սեպտեմբերին հարկաւոր եղած նորոգութիւնները միշտ անում ենք, բացի ամէն շաբաթ եղած կարկատաններից:

Չը մոռանամ յիշել և այն, որ Բաբանասեանը երկու տարի որդեգիր էր դպրանոցում և տեսէք ամէն շաբաթ և տօն օրերին տուն էր գնում: Այդ ինչպէս է, որ երկու տարուայ ընթացքում ոչ մի անբարոյականութիւն չէ յայտնել ս. Խուրովը և դրժդոհ է միայն այժմ, երբ կամեցաւ հանել իր խորթ որդուն դպրանոցից: Իսկ դպրանոցից Բաբանասեանին հանելու պատճառը այն էր, որ պ. Խուրովը չը հաւանեց «հայիրէնին խիստ զօռ տալուն», ինչպէս ինքը յայտնեց հոգաբարձութեանը: Եթէ Բաբանասեանին դպրանոցից հանելու պատճառը շապկի ցնցոտի և անմաքուր լինելն էր, ինչու պ. Խուրովը չը ներկայացրեց նոյն զզուելի ցնցոտին հոգաբարձութեանը և պարզ չը յայտնեց հոգաբարձուներին այդ մասին: Կարծում ենք, որ այդ աւելի նպատակայարմար կը լինէր:

Պ. խմբագիր, դուք վկայում էք, որ ձեր ցոյց տուած շապիկը արդարև ցնցոտի էր և զզուելի կեղտոտ: Ես ընդունում եմ, որ դուք այդպիսի շապիկ էք տեսել. բայց՝ արդեօք այն շապիկը դպրանոցից ստացած էր և եթէ այն էր՝ մթթէ դիտաւորը պատասխանել և կեղտոտել շապիկը պ. Խուրովի նման մարդու համար մի դժուար գործ էր: Այո, ես հրապարակաւ յայտնում եմ, որ՝ կամ ձեզ ուրիշ շապիկ են ցոյց տուել և կամ դիտմամբ ցնցոտի են դարձրել և կեղտոտել դպրանոցից ըստացած շապիկը:

Ի վերջոյ պ. Խուրովի հաղորդած տեղեկութեան առթիւ ժողովրդի զայրոյթը դպրանոցի հոգաբարձութեան դէմ ձեր կողմից անիրաւացի կերպով դրգռելու մասին ես այսքանս կասեմ, որ դուք շատ հեշտութեամբ կարող էիք ստուգել այդ ինքն ըստ ինքեան անհաւատալի տեղեկութիւնը և այնպէս տպագրել, և ոչ թէ պ. Խուրովի կրքերին բաւականութիւն տալու ծառայեցնէիք ձեր թերթը, որով ազատ կը լինէիք այսպիսի չարաչար սխալմունքի մէջ ընկնելուց:

Խնդրեմ այս բացատրութեանս տեղ չնորհէք «Մշակի» մօտակայ համարներից մինում:

Տեսուչ Ներսիսեան դպրանոցի և անդամ հոգաբարձութեան՝ Ար. Նահապետեան

---

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 28 սեպտեմբերի

«Մեղուի» 73 համարը, որ լի էր հայհոյանքներով և երեխայական գատողութիւններով, բոլորովին պատիւ չէ բերում պ. խմբագրին, որ իր նահապետական գաղափարներով պատճառ է դառնում ամբոխի մէջ զանազան դժգոհութիւններ տարածելուն և աւելի ամուր պահելուն նորա կորստաբեր նախապաշարմունքները: Մի մարդ, որ իր ամբողջ կեանքը նուիրում է մի անօգուտ գաղափարին, նա միշտ անհանգիստ է լինում հոգով. թէպէտ հասկանալով իր գաղափարի ոչնչութիւնը աշխատում է հեռացնել իրանից այդ գաղափարը, բայց այդ նրան չէ աջողվում, որովհետև այդ գաղափարը այնպիսի խոր արմատներ է գցել նորա ուղեղի մէջ, որ դժուար է հեռացնել և նորան փոխարինել նոր և լուսաւոր գաղափարով: Նա այդ ճշմարտութիւնը ըմբռնելով ինքն իրեն ասում է. «ձուկը ջրից հեռացնես, կոչնչանայ, ուրեմն աւելի լաւ է իմ հին գաղափարս, քան նորը»: Պ. Սիմէոնեանցը թէպէտ լաւ է հասկանում, որ ներկայումս ազգն ինչից աւելի օգուտ չէն կարող տալ նորա հին քարոզները, բայց հակառակ իր համոզմունքի դարձեալ նոյն է քարոզում ամբոխին, որովհետև արդէն միանգամից խոր արմատներ են գցել նորա ուղեղի մէջ հին ազգակործան գաղափարները: Սիմէոնեանց իր բաց նամակով և նահապետական ֆելիէտօնով, որ ոտանաւորի ձևով էր գրված, իր եղուփական փոտած գաղափարներով կ սմնում է դուրեկան լինել հայ ժողովրդի նախապաշարմունքով լի գլուխներին միայն: Ինչ կուզէ անի. նրա պաշտելի, նախապաշարված ծերերը շուտով կանցնեն, քան «Մշակին» համամիտ երիտասարդները իրանց թարմ ուժերով: Եղուփոմեան դարը անցաւ, այժմ երիտասարդ և նոր ուժերի դար է: Բաւական է վերջապէս հայհոյանքներով և անամօթ հակառակութեամբ բոլորովին զայրացնել դեռ նոր ընթերցասէր հայ ժողովրդին, զզուեցնել նրան փոտած, թթու, ատելի, դժուարամարս կեղտոտութիւններով: «Մշակը» ասում է. հայը ինքնաճանաչութիւն և ինքնապաշտպանութիւն պիտի ունենայ, «Մեղուն» ասում է. թող թիւրքաց հայերը անինայ կոտորվեն քրդերի ձեռքով, բայց զէնք չը վերցնեն. «Մշակը» ասում է լաւ է հայը՝ ազգով հայ լինի քան կրօնով և այդ ճշմարտութիւնը «Մեղուն» հասկանում է, բայց հակառակվում է: Մի ժամանակ, Մակար եպիսկոպոսի օրով «Մեղուն» մեր տգէտ հոգևորականների կողմը պաշտպան էր հանդիսանում, բայց էնց Մակարը հեռացաւ պաշտօնից, սկսեց հայհոյել հոգևորականներին, իսկ երբ տեսաւ որ դրանով «Մշակին» քաջալերած կը լինի, որ ամենայն հանդգնութեամբ անխիղճ պաշպանել է իր ուղղութիւնը,—սկսեց վերջերումս լեզու փոխել: Եգուց եթէ «Մշակը» ասէ՝ հալածենք մեր հայ աւետարանականներին և կաթոլիկ եղբայրներին, որոնց առաջնորդների շնորհով հայ աշխարհաբար լեզուն, իսկ վերջինների գրաբար լեզուն մեռելութիւնից կենդանացան—«Մեղուն» անշուշտ կը հակառակի, հայհոյելով և քարոզներ կարդալով Արծրունու դլխին. «Այդպէս չէ կարելի, դուք տգէտ էք, դուք յետադէմ էք, եղբայրն եղբօրը չը պէտք է հալածի, դա դաւաճանութիւն է, ազգի կործանումն է» և այն... Բայց տերիք է ճշմարիտ, բաւական է, գիտենք, որ Սիմէոնեանց «Մշակի» անհաշտ թշնամի է, ինչ կամենայ գրի, նրա ընդացքը ընդունելի չէ, այլ զզուելի ճշմարիտ հայ ընթերցասէրներին. նրա լրագիրը օրդան է խաւարասէրների: Մենք խորհուրդ ենք տալիս Սիմէոնեանցին հեռանալ Թիֆլիսից, փակվել մի որ և է վանքի մէջ, որտեղ կարող է հեշտութեամբ գտնել բազմաթիւ հաստ խոշներ, իսկ մեր մէջ երբէք չեն ընդունելի նրա քարոզները:

Խաւարասէրները ասում են. «Որտեղ էր «Մշակը» երբ «Մեղուն» այս ինչ գործեր էր կատարում:» Այո, մի ժամանակ «Մեղուն» միայնակ գործելով դրաւում էր ժողովրդին իր նահապետական գաղափարներով, բայց երբ «Մշակը» հանդէս դուրս գալով սկսեց նորա խոշոր սխալները ուղղել, դա ընդհակառակն սկսեց զանազան չարախօսութիւններ բարդել «Մշակի» վրա և միմիայն նրանով զբաղվել: Վերանենք, օրինակի համար, «Մեղուի» 73 համարը. չարժէր մինչև անգամ հրատարակել այդ համարը, որովհետև ոչինչ օգտաւէտ նիւթ չը ներկայացնելով պարունակում էր միայն Արծրունու դէմ ուղղած զանազան հայհոյանքներ մի կեղծ նամակ Աբրահամ Ամիրխանեանց ստորագրութեամբ: Եւ այդպէս են գրեթէ նրա բոլոր համարները: Պարզ է որ «Մեղուի» գոյութիւնը «Մշակիցն» է:

Եթէ «Մեղուն» ընդունակութիւն ունենար որ և է առաջադիմութիւն անել, մենք նրան խորհուրդ կը տայինք թողնել իր նախաջրհեղեան գաղափարները և ծանօթանալ նոր-լուսաւոր գաղափարների հետ: Այդ է պահանջում ժամանակը, այդ է պահանջում տան և ինքներդրող դարը այն մարդուց, որ յանդգնում է ազգի մտաւոր կեանքի առաջնորդ լինել:

Մ. Կիւրեղեանց

---

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

---

## «ГОЛОСЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Էրզրումից «Голосъ» լրագրին գրում են սեպտեմբերի 22-ից:

Սայիդ-փաշայի մեծ վեզիր նշանակվելու, որ տեղացիներին յայտնվեցաւ սուլթան Էրզրումի գլխաւոր նահանգապետ Միլի Մուստաֆա-փաշային տուած հրամանով, շատ տխուր տպաւորութիւն գործեց բոլոր քրիստոնեաների վրա: Սայիդ-փաշա քրիստոնեաներին յայտնի է Իլան-փաշա (օձ-փաշա) անունով, որովհետև մեծ վեզիր եղած ժամանակ մինիստրների խորհուրդի մէջ ասել էր. «Եթէ մեր նախորդները այնքան յիմար էին, որ մեզ համար այսքան գաւեստեղծեցին, մենք շատ շուտ պէտք է ազատենք նրանց սխալը, բոլոր քրիստոնեաներին հանդամանքի մահմեդական դարձնելով, կամ նրանց բոլորին կոտորելով»

Կ. Պոլսից եկողները պատմում են, որ Սայիդ-փաշայի դէպի քրիստոնեանները ունեցած ատելութեան պատճառով հանց պատարիարքը բայրամի օրը չը գնաց պալատը սուլթանին շնորհաւորելու համար, որպէս զի Սայիդ-փաշայի միջնորդութեամբ չը նեղ կացնայ սուլթանին: Սուլթանի կառավարութիւնը ահա այսպէս է մինչ Յարուցեալ քրիստոնեաներին այն բոպէին, երբ Եւրոպան նրանց պաշտպան է հանդիսանում:

Տեսնելով Թիւրքիայի խաղացած կատակները Եւրոպայի հետ, այստեղ ամենքը ափսոսում են, որ Բերլինի կոնգրեսի ժամանակ Ռուսաստանը համաձայնեց դուրս բերել իր զօրքերը Թիւրքիայի սահմաններից առաջ, քան թէ Թիւրքիան կատարել էր Բերլինի դաշնագրի բոլոր պայմանները:

Ահա մի օրինակ, որից ակներև երևում է, որ Թիւրքիան չէ ցանկանում մի բան անել հարստահարութիւնների առաջն առնելու համար: Որովհետև Էրզրումի պոլիցիմէյստերի պաշտօնը ստանայ ցանկացողներից մէկը մի սուտ յայտնութիւն էր արել Թիւրքաց կառավարութեանը, Կ. Պոլսից դարկվեցաւ այստեղ սուլթանի ադիւտանտներից մէկը դործը քննելու համար: Ադիւտանտին յանձնված էր միայն պոլիցիմէյս-

տերի գործողութիւնները քննել, բայց երիտասարդ Ֆրանսը հէնց որ Փոքր-Ասիայի հողի վրա ոտք կոխեց, իսկոյն սկսեց ամենքին հալածել, ամենքից հաշիւներ պահանջելով և ոչոքի վրա ուշադրութիւն չը դարձնելով։ Երիտասարդ օֆիցերի հնարագէտ գործողութիւնը նրանով վերջացաւ, որ Հայաստանի մէջ եղած վարչական և զինուորական բոլոր անձինքը, գիտենալով իրանց յանցանքները, «խիստ քննիչի» գրպանները ոսկով լցրին և նա ուղևորվեցաւ Կ. Պոլիս տանելով իր հետ գրեթէ մի թաբուն իրան ընծայած արաբական ձիաներ։ Այսպիսի նշանակութիւն ունի Թիւրքերէն ասվածը «միջոցներ ընդունել չարագործութիւնների առաջն առնելու համար։»

Սայիդ փաշայի մասին տարածված այն կարծիքը, որ նա քրիստոնեաներին տանջող է, նա արդարացրեց իր առաջին կարգադրութիւններով։ Այստեղի նահանգապետ Մուստաֆա-փաշա ստացաւ հեռևեալ հրահանգը, որ չափազանց գաղտնի էր, բայց մի քանի բոպէում ամենքին յայտնի եղաւ։ «Ճների արթնութիւնը անզօր անելու համար, գրում է Սայիդ-փաշա, հարկաւոր է նրանց արիւնոտ ոսկոր ցոյց տալ, բայց նրանցից ոչ մէկին չը տալ կրծելու համար։ Երբ լաղալի համբերութիւնը կը հատնի, պէտք է ոսկորը այնպէս դցել, որ ինչքան կարելի է շատ կռիւ լինի»։ Այսպիսի անամօթ համեմատութենից յետոյ, այժմեան կառավարութեան առաջնորդը սկսում է մանրամասնաբար մեկնել, թէ ինչպէս պէտք է վարվել քրիստոնէական զանազան դաւանութիւնների առաջնորդների հետ։ Պէտք է յոյս տալ ամենքին առանձին առանձին, ասված է հրահանգների մէջ, սուլթանի ողորմութեան վրա և ամենքին սպասել տալ։ Իսկ եթէ զանազան դաւանութիւնների միմեանց հետ մրցող առաջնորդների մէջ համերաշխութիւն կը լինի, պէտք է նրանց անփութանութեան համար ամենայարմար առիթ տալ։

Մեծ վեզիրի ուղարկած հրահանգները տուին իրանց պտուղները։ Հայ-կաթոլիկների եպիսկոպոս Ստեփաննոս, նահանգապետից խրատված, յանկարծ ընդհատեց իր բարեկամութիւնը հայ-լուսաւորչականների առաջնորդ Օրմանեան եպիսկոպոսի հետ և բողոքեց նահանգապետին այն իրողութեան դէմ, որ Կ. Պոլսից Օրմանեանին գլխաւորութեան իրաւունք էր տուած։ Երկու եպիսկոպոսների հօտերը քիչ էր մնում մի ահագին անկարգութիւն սկսէին, բայց Օրմանեան եպիսկոպոսը ներկայացա բոլոր դաւանութիւնների հայերին, համաձայնվելով ամեն կերպ «ատորանալ», միայն թէ այդ ստորութեան «աղբիւրը չարիք» չը լինի։ Թիւրքերի հնարը նրանով վերջացաւ, որ երկու եպիսկոպոսները համբուրվեցան և դարձեալ բարեկամ մնացին։

Չը նայելով Սայիդ-փաշայի և նրա նմանների բոլոր խորամանկութիւններին, չը նայելով Թիւրքերի ջանքերին, որ գործ են դնում ժամանակի ոյժին ընդդիմանալու համար, այնու ամենայնիւ մահմեականների արտօնութեանը քրիստոնէական նահանգների մէջ վիճակված է անհետանալ։ Արդէն իրանք Թիւրքերը այդ բանը զգում են և զգուշութեամբ պատրաստվում են Շամ (Դամասկոս) ուղևորվելու համար։

Վանի ռուսաց հիւպատոս գնդապետ Կամարականին սպառում են այստեղ այսօր, կամ վաղ։ Նա կանչված է պ. Նօվիկովից և ուղևորվում է Կ. Պոլիս։ Ենթադրում են, որ Կամարականին մի այլ, աւելի բարձր պաշտօն կը տրվի Հայաստանի մէջ։ Այսպիսի փոփոխութիւնը շատ լաւ տպաւորութիւն կը գործէ ոչ թէ միայն տեղացի քրիստոնեաների, այլ և մահմեականների վրա, որոնք չափազանց լաւ կարծիքի են երզրումի պօլիցիմեյստերի մասին, որ այդ պաշտօնը կատարում էր, երբ ռուսները դեռ չէին հեռացել։

Վանից ստացված լուրերը կորցրին իրանց երկդիմի բնաւորութիւնը. չափազանց խիստ բնակեցրած և բնութեան պարգևներով ամենահարուստ Վասպուրականի նահանգը ապստամբված է։ Ապստամբների հետ միանում են Դիարբեքիրից և այլ նահանգներից եկած ոյժերը։ Իսկ Սայիդ փաշա իր հրամանների մէջ անդադար խօսում է սուլթանի «ապագայ ողորմութիւնների» մասին։ Քրիստոնեաները չեն սպասում այդ ողորմութիւններին և կամենում են ուրիշ միջոցներով ձեռք բերել իրանց իրաւունքները։

## ՖՐԱՆՍԻԱ

Փարիզից «Polit. Corresp.» լրագրին գրում են հեռևեալը սեպտեմբերի 25-ից։ Բերտելեմի Սեն-Իլերի արտաքին գործերի մինիստր Նշանակվելը ապացուցանում է, որ Ֆրանսիայի քաղաքականութիւնը Եւրոպայի մէջ կատարելապէս խաղաղասէր կը լինի։ Հասարակութիւնը այդ է պահանջում կառավարութենից և Գամբետտայի բարեկամներն էլ պնդում են, որ պատգամաւորների ժողովի նախագահը նոյն բանն է ցանկանում։ Նոր մինիստրի ուղարկած շրջաբերականը Ֆրանսիայի ներկայացուցիչներին ապացուցեց այդ խաղաղասէր քաղաքականութիւնը։ Գամբետտայի բարեկամները պնդում են, որ Ֆրէյսինէի հրաժարականի պատճառը արտաքին քաղաքականութեան հարցերը չէին։ Այսպիսի ժամանակ, երբ Ֆրանսիական դիպլոմատիան պէտք է զգուշութեամբ վարվի, Բարտելեմի Սեն-Իլեր շատ յարմար մինիստր է, որովհետև նա չափազանց զգոյշ է և ձիշտ հայացք ունի գործի վրա։ Սա Թիերի կատարեալ պատկերն է։ Գուցէ Բարտելեմի Սէն-Իլեր համակրում էլ է յոյներին, բայց նա այնպիսի մարդ է, որ իր անձնական զգացմունքները երբէք չի խառնի երկրի ընդհանուր քաղաքականութեան հետ։ Գերմանական լրագիրների մէջ տպվեցաւ նոր մինիստրի մի քանի նամակները, որոնց նա գրել է «Deutsche Revue» ամսագրի խմբագրին։ Այդ նամակների մէջ մինիստրը ասում է, որ արևելեան հարցի մէջ, Ռուսաստանի վերաբերութեամբ, Աւստրիայի, Անգլիայի և Ֆրանսիայի շահերը միատեսակ են։ Նա ճանաչում է աւստրօ-գերմանական համաձայնութիւնը և նրան խաղաղութեան գրաւական է համարում։ Ֆրանսիան պէտք է բարեկամական յարաբերութիւններ ունենայ Անգլիայի հետ, բայց ամենից առաջ նա պէտք է իր շահերը ի նկատի առնէ։

Փարիզից Բերլինի մէջ հրատարակվող «National Zeitung» լրագրին հեռագրում են սեպտեմբերի 30-ից։ Չը նայելով, որ պաշտօնապէս հերքվում է, բայց ես հաստատ աղբիւրներից տեղեկացայ, որ պապական նունցիակը հրաման է ստացել հեռանալ Փարիզից, եթէ Ֆրանսիական կառավարութիւնը դարձեալ կը գործադրի օրիպողական միջոցներ հոգևոր միաբանութիւնների դէմ։ Նուտով կը սկսեն գործադրել մարտի հրամանները. կը սկսեն փակել այն եկեղեցիները, որոնք արգելված միաբանութիւններին են պատկանում. իսկ այդ միաբանութիւնների օտարահպատակ անդամները կարտաքսվեն Ֆրանսիայից։

Փարիզից «Köln Zeitg» լրագրին սեպտեմբերի 30-ից գրում են։ Ներքին գործերի մինիստր Կոնստան հոկտեմբերի 4-ին կը հանի Փարիզ, որպէս զի այդ ամսի 5-ին ներկայ լինի մինիստրների խորհուրդին։ Մինիստրների խորհուրդի մէջ կը քննվեն այն միջոցները, որոնք պէտք է գործադրվեն արգելված միաբանութիւնների դէմ։ Ներքին գործերի մինիստրութեան մէջ այսօր հաւաքվել էին տաս պրեֆեկտներ, որպէս զի մինիստրից հրահանգներ ստանան մարտի հրամանների վերաբերութեամբ։

## ՉԵՐՆՕԳՕՐԻԱ

Բաղուզայից «Polit. Corresp.» լրագրին գրում են սեպտեմբերի 22-ից հեռևեալը։ Այստեղ ապրող մեծ պետութեան հիւպատոսներից մէկը, որ վաղուց վայելում է չերնոգորիական իշխան Նիկոլայի բարեկամութիւնը, նորերում չերնոգորիական զօրքերի հրամանատար Բօժօ Պետրովիչից մի նամակ ստացաւ, որի մէջ նկարագրված է չերնոգորիական իշխանի քաղաքականութիւնը։ Այդ նամակից երևում են այն շարժառիթները, որոնք դրդում էին ալբանցիներին թուով գերազանցող չերնոգորիական զօրքերին չը պատերազմել նրանց հետ։ Բօժօ Պետրովիչ վաղուց խորհուրդ էր տալիս իշխանին, որ նա հրամայի իր զօրքերին յարձակվել ալբանցիների վրա, որպէս զի այս վերջինները ժամանակ չունենան ամրանալու համար։ Բայց իշխանը միշտ մերժում էր յարձակողական գործողութիւնները, ասելով, որ մտադիր է դեռ ևս բոլոր միջոցները գործ դնել Դուլցինիօն խաղաղ ճանապարհով գրաւելու համար, որպէս զի մի կողմից Չերնոգորիան պատերազմի մէջ մարդիկ չը կորցնէ և միւս կողմից հեշտութեամբ հանգստանան չափազանց դրդված ալբանցիները և Չերնոգորիայի բարեկամ դառնան։» Ալբանցիները, ասում է իշխանը, աւելի տարաբաղդ են քան թէ մենք եղել ենք մի ժամանակ։ Վաղ թէ ուշ նրանք մեր հպատակներ կը դառնան, ուրեմն հարկաւոր չէ նրանց կոտրել։ Իշխանը կամենում է ալբանցիների ընդդիմադրութիւնը անզօր անել միացեալ նաւատորմի օգնութեամբ և նրա զօրքերը առժամանակ պահպանում են չերնոգորիական սահմանները։ Պատերազմ սկսելու ժամանակը և ձևը հանգամանքներից է կախված։ Ցիշեալ նամակից երևում է, որ իշխանը հաւատարիմ մարդկերանց միջնորդութեամբ, առաջարկելով ալբանցիներին ընդարձակ արտօնութիւններ, մտադիր է անզօր դարձնել ալբանցիների ընդդիմադրութիւնը, կամ գոնէ նրանց թիւը փոքրացնել։ Իշխան Նիկոլայի այդպիսի քաղաքականութիւնը բաւական օգուտներ տուել վերջին պատերազմի ժամանակ։ Օրինակ, իշխան Նիկոլային աջողվեցաւ իր կողմը դարձնել քաջ միրդիտներին։ Պատերազմից սարսափած միրդիտները կամենում էին փախչել, իսկ իշխանը առաջարկեց նրանց իր երկրի հիւրընկալութիւնը։ Այդ առաջարկութենից օգուտ քաղեցին մի քանի հարիւր միրդիտ ընտանիքներ։ Իշխանը հրամայեց նրանց պաշարեղէն և փող բաժանել և այդպիսով— Չերնոգորիայի պետական գանձարանը 800,000 ֆրանկ պարտքի տակ ընկաւ, որ վերջը Պետերբուրգից վճարեցին։ Այդ պատճառով միրդիտները Չերնոգորիայի կուսակիցներ դարձան և նորերում հրաժարվեցան միասնալ ալբանցիների հետ և Չերնոգորիայի դէմ պատերազմել։ Ամենքը հաւատացնում են, որ իշխանից բարեբարված լեռնաբնակ քրիստոնեաները եթէ չեն օգնի չերնոգորցիներին գոնեա նրանց դէմ չեն պատերազմի և անտարբեր կը մնան։

«Daily News» լրագրին Բաղուզայից գրում են հետևեալը։ Դուլցինիօի հարցը կարելի էր հեշտութեամբ վճռել, եթէ չերնոգորիական իշխանը օգուտ քաղեր Թիւրքաց կառավարութեան առաջարկութենից և Դուլցինօի փոխարէն դրամական վարձատրութիւն ստանար։ Ամենքին յայտնի է, որ չերնոգորցիները առանձին ցանկութիւն չունեն երկրորդ նաւահանգիստ ձեռք բերելու համար։ Մինչև այժմ բացի չերնոգորիական պահապան զօրքերից ոչ ոք չէ բնակվել Անտիվարիի մէջ, թէպէտ նրանց առաջարկվեցաւ տները և հողերը ձրիաբար վերցնել։ Մինչև անգամ Անտիվարիի նահանգապետը իր ընտանիքը թողեց Ցետինիէի մէջ։ Իսկապէս իշխան Նիկոլայ ձգտում է ձեռք բերել Դուլցինիօի նաւահանգիստը և կամենում է ընտելացնել իր ժողովուրդը ծովային և առևտրական ձեռնարկութիւններին, բայց մինչև այժմ նրա աշխատանքները ոչինչ հետևանք չեն ունեցել, չը նայելով, որ Անտիվարի չերնոգորցիների ձեռքին է։ Դրա պատճառն այն է, որ չերնոգորցիները իրանց ամբողջ պատմութեան ընթացքում միջոց չեն ունեցել ծովային գործերի հետ ծանօթանալու համար։ Իշխանը և նրա բարեկամները օտար ծովապետների հրահանգներին են սպասում, որոնք իրանց կողմից յայտնել են եւրոպական կառավարութիւններին գործերի այժմեան դրութիւնը։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՆԻՒ-ԻՕՐԿ, 1 հոկտեմբերի։ Ինդիանա և Օհայո նահանգների մէջ ընտրութիւնների ժամանակ հանրապետական պատգամաւորները յաղթեցին։ «Herald» և «Tribune» լրագիրները այդ հանգամանքը գրաւական են համարում, որ նախագահի ընտրութեան ժամանակ հանրապետականները կը յաղթեն։

Կ. ՊՕԼԻՍ, 30 սեպտեմբերի։ Այս գիշեր սուլթանը ստորագրեց իրադէ, որով հրամայում է Դուլցինիօ յանձնել Չերնոգորիային խաղաղ ճանապարհով։ Չերնոգորիայի հետ դաշնագրութիւն կը կապվի բնակիչների հիմնարկութիւնները և կրօնը պահպանելու համար։ Իրադէն հաղորդված է դեսպաններին։ Բ. Դուռը հաղորդեց դեսպաններին, որ հրահանգներ կը տայ Դուլցինիօն չերնոգորցիներին յանձնելու մասին։

ՑԵՏԻՆԻԷ, 30 սեպտեմբերի։ Բ. Դուռը հաղորդեց Չերնոգորիային, որ այս շաբաթ Դուլցինիօն կը յանձնի։ Չերնոգորցիների մեծ մասը հեռանում է սահմաններից հունձը հաւաքելու համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 25 կ., երկրորդ 92 ր., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 92 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 215 ր. 5 կ., երկրորդ 209 ր. 5 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 50 կ., երկրորդ 90 ր. 62 կ., երրորդ 90 ր. 37 կ., ոսկի 8 ր. 25 կ։ Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ $23\frac{15}{16}$ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 205 մարկ, Փարիզի վրա 255 ֆրանկ։ Տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կենտրոնական Գրավաճառանոցի հրատարակութեամբ այս օրերս լոյս տեսան Սահմանոս աւագ քահանայ Տէր-Ստեփանեանցի աշխատասիրած «Սկզբունք քրիստոնէական ուղղափառ հաւատոյ Հայաստանեաց եկեղեցւոյ» դասագրքի երկրորդ տպագրութիւնը հեռեւեալ յաւելուածներով. համար. 11. Յակոբ Նահապետի որդիքը. 12. Յովսէփը բանտում. 13 Յովսէփի փառքը. 14. Յովսէփի եղբայրները գալիս են Եգիպտոս. 15. Յովսէփի եղբայրների երկրորդ գալուստը Եգիպտոս, 16. Թէ ինչպէս եղբայրները ճանաչեցին Յովսէփին. 17. Յակոբի Եգիպտոս տեղափոխուիլը:

Աղօթք վան Թագաւորի «Խաչի քո Քրիստոս», «Այսօր կանգնեցաւ և էջմիածինն ի Հօրէ» շարականները դասաւորված են իրանց տեղերում պատմութեան իմաստին համաձայն: Նկարագրութիւն ոանալուայի հանդէսի ու թագաւորութիւն ի պատիւ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի սահմանուած օծների: Գինը ըստ առաջնոյն 50 կոպէկ է:

Վերջապէս հարցմունքները, որոնք առաջին տպագրութեան մէջ զետեղուած էին իւրաքանչիւր յօդուածի ներքոյ, այժմ ամփոփուեցան գրքերի վերջումը առանձնապէս:

—

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է նոյն գրավաճառանոցում «Նոր դասագիրք թուաբանութեան» Գ. Վարձելեանի, գինն է 70 կոպէկ:

—

| | | Ր. | Կ. |
|---|---|---|---|
| 1. | Ժողովրդական այբբենարան | — | 5. |
| 2. | Տէր-Գէորգեան Մայրենի լեզու ա. տ. | — | 35. |
| 3. | — — Մայրենի լեզու բ. տ. | — | 40. |
| 4. | — — Մայրենի լեզու գ. և դ. տ. | — | 70. |
| 5. | Աղայեանց ուսումն Մայրենի լեզուի | — | 15. |
| 6. | Ս. Մանդինեան Նահապետական և Հայր. աշխահ. | — | 60. |
| 7. | — Ազգային ընտանեկան աշխարհ ա. տ. | — | 25. |
| 8 | — — Դիւցազանց. աշխարհ | — | 30. |
| 9. | — Ազգ. ու ընտան. աշխարհ ուսուցչաց ձեռնարկ | — | 70. |
| 10. | Տէր-Դաւթեան դասագիրք ռ. լ. Русское Слово | — | 45. |
| 11. | Այվազեան Գ. Ա. Ե. Նախակրթանք հ. լեզուի մ. ա. | — | 40. |
| 12. | Եղիշէ, պատմութիւն Վարդանանց | 1. | — |
| 13. | — Նոյն հասարակ կազմի վրա | — | 20. |
| 14. | Տէր-Սարգսեան հայերէն վայելչագրութեան օրինակ | — | 20. |
| 5. | Պալասանեան Քերականութիւն Մայրենի լեզուի | — | 50. |

Վերոյշեալ գրքերի գնողները «Կենտրոնական գրավաճառանոցից» նշանաւոր զիջումն են ստանում:

---

Մի մոլդավեցի պարոն, Յովհաննէս Եաղջեան, որ ՈՒՍՈՒՑՉՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ունին Վերհափառ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ, ցանկանում է ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ և ԵԿԵՂԵՑԱԿԱՆ երգեցողութեան ՈՒՍՈՒՑՉԻ պաշտօն ստանալ: Հասցէն. Թիֆլիսի Հայոց կօնսիստորիա, հարցնել Յովհաննէս Եաղջեանին:

2—8

---

ՎԱՐՁՈՎ է տրվում 6 ՍԵՆՆԱԿ ԽՈՀԱՆՈՑՈՎ, ՆԵՐԳՆԱՏՆՈՎ և այլ յարմարութիւններով: Մանաւանդ յարմար է ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար: Նօրաշենսկայա փողոց, Իսակ ՓՈՒՂԻՆՕՎԻ տուն: Գնի մասին կարելի է նոյն տեղը տեղեկանալ:

2—2

---

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ստացվեցաւ ՇՕԿՕԼԱԴ ԵՒ ԿԱԿԱՕ ՖՐԱՑ

6—20

---

Ծախվում է ՄԻ ՏՈՒՆ ԱՑԳԻՈՎ ԵՒ ԲԱԿՈՎ 450 սաժ. մեծութեամբ. գտնվում է ՎԵՐԱ, ԱՐՁԱՆԻ ՁԱԽ ԿՈՂՄԸ, բարձրութեան բա: Բացի այդ նոյն տեղը ծախվում է 1000 սաժ. ՀՈՂ միասին և մաս մաս:

3—3

---

Սեպտեմբերի 27-ից սկսած, ժամը 10-ից առաւօտեան, ամեն օր, բացի տօն օրից, լինելու է ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ ԱՃՈՒՐԴ կօրինական և դատարանական ապրանքների վրա անկարող պարտապանների, Ց. և Ե. ՁԱՆԶՈՒՂԱՋՈՎՆԵՐԻ մագազինից, մաս մաս և ազատ դներով, ընհատութենից ցած, Գօլովինսկի պրոսպեկտում գտնված մագազինում, Մուխրանսկու տանը:

Երդուեալ հոդաբարձուներ Ա. Ստեփանով, Բ. Եակուլով.

4—4

---

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԵԱՆ ՕՂԻՒ գործարան պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՇԱՌՈՒՐ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսվելին ծախվել ամենալաւ մաքրված ՕՂԻՆԵՐ հետեւեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲՐԻՆՋԻ և ԲՈՒԼՄԵՐԻՆԳ: Շիշը ամանով արժէ 45 կ., առանց ամանի 38 կ, կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., կ, ամեն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն: Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զիջումն է անվում. Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՐՏԻՑ շոգիի մաքրելու օգնութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՑՐԱՔՂԱՔԻ ամենալաւ գործարանների մէջ պատրաստվածներից վատ չէն: Պ. պ. գնողների ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիների պահեստը գտնվում է Միքայէլեան կամուրջի վրա, Յենտարանայա հիւրանոցի տակ, Լիխատինսկու տանը, Վօրոնցովի արձանի դիմացը: 8—8 (2 շաբ.)

---

## ՐԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց և մանկաբարձական հիւանդ. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ. Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ.:

Չորեքշաբթի Լիսիցեվ ներքին հ., Շտեյմբօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Գավրօնսկի մանկաբարձական և կանանց հ., Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Մինկեվիչ խիրուրգիական հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտեյմբօրսկի և Աստվածատուրով ներքին և կաշու հ.:

Շաբաթ. Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ.:

Ատամնաբոյժ Օբրեխտ ազքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է իր տունը ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

---

ПОСТУПИЛА ВЪ ПРОДАЖУ НОВАЯ КНИГА.

## ЗАКОНЫ

О ДУХОВНЫХЪ ЗАВѢЩАНІЯХЪ

Составлъ присяжный повѣренный Г. Бертгольдъ, съ поясненмъ текста законовъ. и с приложеніемъ подробныхъ буквальныхъ извлеченій изъ рѣшеній гражд кас. деп сената состоявшихся съ 1867 г. по 1879 г. включительно, рѣшеній Общихъ Собраній Сената и Высочайше утвержденныхъ мнѣній Госуд. Совѣта. Къ книгѣ приложены постатейный указатель и алфавиты, облегчающіе пользованіе книгою.

Цена 3 р. 50 к., съ пересылкою 4 руб. Книгопродавцамъ обычная уступка. складъ книги у издателя Г. Бертгольдъ, въ Москвѣ, на Тверской въ домѣ Хомяковыхъ, быв. Пораховщикова, кв. № 16. Иногородные могутъ обращаться во всѣ на и болѣе извѣстные книжные магазины и къ издателю: выписывающіе книгу прямо отъ г Бертгольдъ за пересылку не плотятъ.

1—1

---

Ընդունում եմ ամեն տեսակ պատուէրներ ԿՕՆՖԷԿՏՆԵՐԻ, ՊԵՐՕԺՆԻ, ՍՈՒԽԱՐԻ զանազան տեսակի, մուրաբի, և ընտիր տեսակ ՖՐՈՒԿՏՕՎԻ ԿՕՆՖԷԿՏԻ, և ամեն տեսակ կոնդիտերի ապրանքի, շատ մատչելի գներով: Պատուէրները կը կատարվեն ամեն ճշտութեամբ, և խղճմտաբարցանկացողք կարող են դիմել ինձ հետեւեալ հասցէով, Въ Тифлисѣ, МАРТИРОСУ АХНАЗАРОВУ. НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ, МАГАЗИНЪ ВАРШ ВСКАЯ ПЕКАРНЯ. փոստային կոնֆէկտ պատանդողների ճանապարհածախքը ինձ վրա եմ առնում,

Մ. Հախնազարեանց.

18—50

---

## ՆՈՐ ՀԱՆԴԻՊ

ՖԻԼԻՊՈՎԻՉ ԵՒ ԸՆԿ. ԼՈՒՍԱՆԿԱՐԻ չորս ամսվայ գործունէութեան հետեւանքները: (Առանձնապէս լուսանկարի համար կառուցած շինութեան մէջ): Գօլովինսկի փողոց, տուն Կ. Եա. Զուբալովի, Թիֆլիսի կըլուբի մօտ: Բաց է ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 7 ժամը:

9—10

---

Դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Կենտրոնական և Զ. Գրիգորեանցի գրախանութներում Ս. Մանդինեանի հետեւեալ դասագրքեր.

| | |
|---|---|
| 1. Ազգային Ընտանեկան աշխարհք և Այբբենարան (ա. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . | 25 կ. |
| 2. Նոյնը ուսուցիչների համար բացատրութիւններով հանդերձ) . . . . . | 75 կ. |
| 3. Ազգային Դիւցազնական աշխարհ (բ. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . . . . | 30 կ |
| 4. Նահապետական և հայրենի աշխարհ (գ. տարուայ ուսմունք և ընթերցմունք (բ. տպագրութիւն) . . . . . | 65 կ |

---



Կ. ՊԱՆՅԵՐ, ԷՏԼՄԱՆՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ տուն ՋՈՒՐԱԼՕՎԻ: Եկող ձմեռվայ սեզօնի համար առաջարկվում եմ պատուելի հասարակութեանը ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁԵՌՔԻ և ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրոպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ, ամենանոր ՁԵՒԵՐԻ, չափազանց էժան գներով, այսինքն: Ձեռքի մեքենաներ 12—5 ռուբլ: Ոտքի 50—80 ռուբլ:



15—52

---

Հայոց պատմութիւնը իսկական աղբիւրներից ուսումնասիրելու համար կարևոր մի գիրք «Հիւսուածք բանից նախնի պատմագրաց հայոց» 3 հատոր, աշխատաս. Կ. Կոստանեանցի:

Ա. հատորը բովանդակում է Արշակունեաց թագաւորութեան անկման և Վարդանանց ու Վահանեանց պատերազմների մանրաման պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած գրաբար:

Բ. հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհաբար, որ ա. հատորի ճիշտ թարգմանութիւնն է.

Գ. հատորը բովանդակում է ա. և բ. հատորների համար կարևոր ծանօթութիւններ. ժամանակագրական աղիւսակներ յաւելուածներ:

Վաճառվում են երեք հատորը միասին—3 ր.

ա. և բ. հատորը միասին 2 ր. 25 կ.,

բ. և գ. հատորը միասին 2 ր. 25.,

Ազգային դպրոցների համար 10 օրինակից աւել առնողներին 10%, զիջումն կը դրուի.

գնելու համար դիմել—Աղեքսանդրապոլ—Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցին.

Տփխիս—Կենդրոնական գրավաճառանոց:

Մոսկվա—Հայոց եկեղեցու երեցփոխան պ. Մեքքոն Փանեանցին:

10—10

---

Дозволено цензурою Тифлисъ, 2 Октября 1880 г. Տպարան եղբայրք Դաւթեանցների Типографія братьевъ Давидовыхъ